Պաշտոնական էլեկտրոնային փոստին ծանուցումների հասցեագրման ծառայություններ մատուցելու պայմանագիր EC062

27/03/2017
օր/ամիս/տարի

Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվում է հետևյալ կողմերի միջև.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ (այսուհետ՝ **ԷԿԵՆԳ**)

Պետ. գրանցման վկայականի համարը	03Ա173877
Պետ. գրանցման վկայականի տրման ամսաթիվը	15.06.2011
Պետ. գրանցման վկայականը տված մարմինը	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժին
Իրավաբանական հասցե	ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
Գործունեության հասցե	ՀՀ, 0010 Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Ի դեմս	տնօրեն Արթուր Թունյանի
Բանկային տվյալներ	«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ, 220410121291000
ՀՎՀՀ	02707093
Կոնտակտային էլ. փոստի հասցե	info@ekeng.am

<u>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</u>

Պետական կամ ՏԻ մարմնի կամ իրավաբանական անձի անվանումը (այսուհետ՝ **Պատվիրատու**)

Պետ. գրանցման վկայականի համարը	**01Բ002254**
Պետ. գրանցման վկայականի տրման ամսաթիվը	24.09.2008թ.
Պետ. գրանցման վկայականը տված մարմինը	Պետական ռեգիստրի Կենտրոն տ/բ
Իրավաբանական հասցե	ք.Երևան, Տիգրան Մեծի 4
Գործունեության հասցե	ք.Երևան, Տիգրան Մեծի 4
Ի դեմս	Աշխատակազմի ղեկավար Խաչիկյան Խաչատուր
Բանկային տվյալներ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, հ/հ 900011040020
ՀՎՀՀ	02705793
Պատասխանատու անձ	Խաչիկյան Խաչատուր
Պատասխանատու անձի հեռախոսահամար	096152515
Պատասխանատու անձի ՀԾՀ	3309700070
Կոնտակտային էլ. փոստի հասցե	kh.khachikyan@anra.am

համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ **Կողմեր**:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ԷԿԵՆԳԸ Պատվիրատուին մատուցում է Պատվիրատուին կամ վերջինիս լիազորված անձանց պատկանող ռեալ ստատիկ IP հասցե ունեցող էլեկտրոնային փոստի հասցե(ներ)ից ֆիզիկական անձանց, ՀՀ-ում գրանցված կազմակերպությունների, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ @e-citizen.am տիրույթում գործող ՀՀ պաշտոնական էլեկտրոնային փոստին (այսուհետ՝ **ՊԷՓ**) հաղորդագրությունների և ծանուցումների հասցեագրման ծառայություն (այսուհետ՝ **Ծառայություն**), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց՝ Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. ՊԷՓ-ի հասցե ունեն ՀՀ հանրային ծառայության համարանիշ ունեցող կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար ունեցող ֆիզիկական անձինք, ՀՀ իրավաբանական անձի կոդ ունեցող իրավաբանական անձինք, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերը:

1.3. Ծառայությունը սահմանափակվում է ՊԷՓ-ի հասցեներին հաղորդագրություն ուղարկելու տեխնիկական հնարավորության ապահովմամբ և ՊԷՓ-ի օգտատիրոջ պահանջով հաղորդագրությունն այլ էլեկտրոնային փոստի հասցեի կամ կարճ հաղորդագրության միջոցով որևէ բջջային հեռախոսահամարի վերահասցեագրմամբ:

2. Ծառայության մատուցման կարգը

2.1. Պատվիրատուն չի կարող Ծառայությունից օգտվել առանց ռեալ ստատիկ IP հասցեի, որը գրանցվում է ԷԿԵՆԳ-ի կողմից սպասարկվող համակարգում:

2.2. Ծառայությունից օգտվելու համար ԷԿԵՆԳ-ը Պատվիրատուի պատասխանատու անձին տալիս է e-citizen.am տիրույթում Պատվիրատուի ադմինիստրատորի կարգավիճակ՝ ապահովելով իր կողմից լիազորված էլեկտրոնային փոստի հասցեներից Պայմանագրով նախատեսված եղանակով պաշտոնական ծանուցումներ ուղարկելու համար անհրաժեշտ կարգաբերումներ կատարելու իրավասությամբ:

2.3. Պատվիրատուի ադմինիստրատորը կարող է կատարել առցանց կարգավորումներ, մասնավորապես, ՊԷՓ-ի հասցեներով հաղորդագրություն ուղարկելու թույլտվություն տալ Պատվիրատուի տիրույթում բացված բոլոր էլեկտրոնային փոստի հասցեներին կամ առանձին էլեկտրոնային փոստի հասցեների, հետագայում դրանք ավելացնել, պակասեցնել կամ փոխել:

2.4. Հաղորդագրություն ուղարկելիս ստացողի ճիշտ ՊԷՓ-ի հասցեն մուտքագրելու համար պատասխանատու է Պատվիրատուն: ԷԿԵՆԳ-ը չի երաշխավորում ՊԷՓ-ի հասցեների ճիշտ և ակտիվ լինելը:

2.5. ՊԷՓ-ի հասցեին ուղարկվող հաղորդագրությունը կամ ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում ստանալու անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն ինքը, իր հաշվին և իր տեխնիկական միջոցների ներգրավմամբ, պետք է ուղարկվող նամակի մեջ ներառի համապատասխան ակտիվ էլեկտրոնային հղում, որը սեղմելով օգտատերը կուղարկի հետադարձ էլեկտրոնային ծանուցում՝ հավաստելով նամակի ընթերցումը: ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում նշված հղումը նամակի հետ ուղարկելու, այն ստանալու կամ մշակելու համար:

2.6. ՊԷՓ-ի օգտատերը կարող է պահանջել ՊԷՓ-ով ստացվող հաղորդագրությունները վերահասցեագրել ցանկացած այլ (մինչև 3) էլեկտրոնային փոստի հասցեի կամ բջջային հեռախոսահամարի՝ կարճ հաղորդագրության (SMS) միջոցով: Այդ դեպքում ԷԿԵՆԳ-ն իրականացնում է հաղորդագրությունների ավտոմատ վերահասցեագրումը՝ առանց դրա մասին Պատվիրատուին ծանուցելու: Ընդ որում, օգտատերը կարող է ընտրել միայն տեղական հեռախոսահամար (+374 կոդով):

2.7. Պատվիրատուն հասկանում է, որ ՊԷՓ-ի հասցեներ տրամադրելու, դրանց հաղորդագրություններ և ծանուցումներ ուղարկելու կարգը սահմանվում է «Պաշտոնական էլեկտրոնային փոստի տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.11.2015 թ. թիվ 1385-Ն որոշմամբ, «Նույնականացման քարտերի մասին» և «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքներով:

2.8. ԷԿԵՆԳ-ը Ծառայությունը մատուցում է վերոնշյալ և այլ կիրառելի իրավական ակտերի հիման վրա, որոնք կարող են ընդունվել Պայմանագիրը կնքելուց հետո:

2.9. Ծառայության հետ կապված հարցեր և խնդիրներ ունենալու դեպքում Պատվիրատուն կարող է կապվել ԷԿԵՆԳ-ի հաճախորդների սպասարկման բաժնի հետ:

3. Վճարման պայմանները

3.1. Ծառայության գինը որոշվում է ԷԿԵՆԳ-ի գնացուցակի համաձայն, որը հրապարակված է ԷԿԵՆԳ-ի պաշտոնական կայքում (www.ekeng.am): ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի Ծառայության գնացուցակը վերանայել՝ նոր գնացուցակն առնվազն 1 (մեկ) ամիս առաջ հրապարակելով իր պաշտոնական կայքում: Նոր

գնացուցակը չընդունելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի նախքան դրա ուժի մեջ մտնելը նախնական ծանուցմամբ լուծել Պայմանագիրը:

3.2. Յուրաքանչյուր օրացույցային ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 5-ը ԷԿԵՆԳ-ը կազմում և Պատվիրատուին ներկայացնում է Ծառայության հանձնման-ընդունման ակտի երկու ստորագրված օրինակ, որի մեջ նշվում են նախորդ ամսվա ընթացքում մատուցված Ծառայության ծավալը և վճարման ենթակա գումարը:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտն ստանալու պահից եռօրյա ժամկետում ԷԿԵՆԳ-ին ներկայացնում է իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժում:

3.4. Եթե Պատվիրատուն 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում կամ մերժում Ծառայությունը, ապա այն համարվում է ընդունված, և Պատվիրատուն պարտավորվում է այդ ժամկետին հաջորդող աշխատանքային օրը ԷԿԵՆԳ-ին տրամադրել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

3.5. Մատուցված Ծառայության ծավալը որոշվում է հաջողությամբ ուղարկված հաղորդագրությունների քանակով:

3.6. Ծառայության գինը ներառում է հաղորդագրությունը բջջային հեռախոսահամարի վերահասցեագրելու գինը՝ անկախ նրանից, թե ՊԷՓ-ի օգտատերն ընտրել է հաղորդագրությունների վերահասցեագրման տարբերակը, թե՝ ոչ:

3.7. Սխալ կամ կիսատ բովանդակությամբ կամ ՊԷՓ-ի հասցեով կամ ոչ ակտիվ կամ անհասանելի ՊԷՓ-ի հասցեով կամ հեռախոսահամարով հաղորդագրություն ուղարկելու կամ վերահասցեագրելու դեպքերում հաղորդագրությունը համարվում է հաջողությամբ ուղարկված և դրա դիմաց գանձում կատարվում է:

3.8. Ծառայության դիմաց վճարումը կատարվում է ամսական կտրվածքով՝ ԷԿԵՆԳ-ի ներկայացրած հարկային հաշիվն ստանալու օրվանից 10 (տասը) բանկային օրվա ընթացքում: Հարկային հաշիվը ներկայացվում է երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

3.9. Վճարումների ուշացման դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի կասեցնել Ծառայության մատուցումը մինչև պարտքի ամբողջական մարումը:

3.10. 30 (երեսուն) օրից ավել վճարումն ուշացնելու դեպքում կամ երկու և ավել անգամ Ծառայության դիմաց վճարումն ուշացնելու դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և պահանջել չվճարված գումարից վճարել տոկոսներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Անվտանգություն և պատասխանատվություն

4.1. ԷԿԵՆԳ-ն ապահովում է իր օգտագործած սարքավորումների, համակարգերի և համակարգչային ծրագրերի անվտանգությունը:

4.2. ԷԿԵՆԳ-ի սարքավորումների, համակարգերի կամ համակարգչային ծրագրերի անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում, ինչպես նաև իր մոտ հրատապ չպլանավորված վերանորոգման աշխատանքների անհրաժեշտության դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի կասեցնել Ծառայության մատուցումը՝ Պատվիրատուի՝ Պայմանագրում նշված կոնտակտային էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով համապատասխան ծանուցում: Պատվիրատուն կծանուցվի նաև Ծառայության մատուցման վերսկսման մասին:

4.3. Իր սարքավորումների, համակարգերի կամ համակարգչային ծրագրերի խափանման դեպքում ԷԿԵՆԳ-ը խափանման մասին տեղեկանալուց հետո 2 (երկու) ժամվա ընթացքում դրա մասին կծանուցի Պատվիրատուին՝ Պայմանագրում նշված նրա կոնտակտային էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով համապատասխան ծանուցում: Նշված խափանումները կվերացվեն հնարավորինս շուտ, և Պատվիրատուն կծանուցվի նաև Ծառայության մատուցման վերսկսման մասին: Սույն կետով սահմանված դեպքերում Պատվիրատուից չի գանձվի ուղարկված, բայց խափանման հետևանքով չառաքված հաղորդագրությունների վճարը:

4.4. ԷԿԵՆԳ-ը պատասխանատու չէ հաղորդագրությունների բովանդակության, ՊԷՓ-ի և վերահասցեագրման համար ընտրված էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարի ճշգրտության և հասանելիության համար, ինչպես նաև դրանց վերջնական օգտատերերին էլեկտրոնային

տվյալների պատշաճ փոխանցման և արտացոլման համար, և պատասխանատվություն չի կրում դրանց հետևանքով օգտատերերի կրած վնասների համար:

4.5. Պատվիրատուն պարտավոր է ապահովել իր սարքավորումների, համակարգերի, համակարգչային ծրագրերի և էլեկտրոնային փոստի հասցեների անվտանգությունը և պատասխանատվություն է կրում Ծառայության ոչ պատշաճ օգտագործման և/կամ չարաշահման համար, այդ թվում, առանց սահմանափակման, վիրուսային ծրագրերի և/կամ սպամի ուղարկման համար: Այդ դեպքերում կհամարվի, որ վնասը պատճառել է Պատվիրատուն:

4.6. Պատվիրատուն պարտավոր է զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք վնասում են կամ կարող են վնասել ԷԿԵՆԳ-ի կամ ՊԷՓ-ի օգտատերերի սարքավորումները, համակարգերը կամ համակարգչային ծրագրերը կամ ուղղված են դրանք ապօրինի մուտք գործելուն կամ ՊԷՓ-ի հասցեներին չթույլատրված հասանելիություն ստանալուն կամ խախտում են այլոց իրավունքները:

4.7. ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց ուղարկած սպամի, վիրուսային ծրագրերի կամ հակերային գործունեության և դրա հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասի համար: Պատվիրատուն պարտավոր է անձամբ պաշտպանել իր սարքավորումները, համակարգերը, համակարգչային ծրագրերը վիրուսներից և անօրինական միջամտությունից:

4.8. Պատվիրատուն է պատասխանատու այն անձանց գործողությունների և անգործության համար, ում իր ադմինիստրատորը տվել է ՊԷՓ-ի հասցեներին հաղորդագրություն ուղարկելու թույլտվություն:

4.9. Սույն գլխի խախտման կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ անմիջապես կասեցնել կամ դադարեցնել Ծառայության մատուցումը և պահանջել պատճառված վնասների հատուցում:

5. Գաղտնիություն

5.1. Ուղարկված և մշակված հաղորդագրությունների վերաբերյալ տվյալները ԷԿԵՆԳ-ը պահպանում է 3 (երեք) տարի:

5.2. ՊԷՓ-ի հասցեին հաղորդագրության ուղարկման, ստացման կամ մշակման վերաբերյալ տվյալները և արխիվացված հաղորդագրություններից քաղվածքները Պատվիրատուին կարող են տրվել գրավոր կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված դիմումի հիման վրա, եթե Պատվիրատուն հանդիսանում է տվյալ հաղորդակցության կողմ (ուղարկող կամ ստացող): Դրանք այլ անձանց պահանջով տրամադրվում են միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Քաղվածքների տրման համար ԷԿԵՆԳ-ը կարող է սահմանել վճար:

5.3. Պատվիրատուն պարտավորվում է պահպանել և իր աշխատողների պարտավորեցնել պահպանել Պայմանագրի կատարման արդյունքում իրեն հայտնի դարձած չբացահայտված տեղեկատվության և անձնական տվյալների գաղտնիությունը և պատասխանատվություն է կրում դրանց անօրինական բացահայտման, որևէ ձևով օգտագործման կամ փոփոխման համար: Սույն կետի խախտման կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ անմիջապես կասեցնել կամ դադարեցնել Ծառայության մատուցումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

6.1. Կողմերն ազատվում են իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրությունը, հաղորդակցության միջոցների խափանումը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի նախնական ծանուցմամբ լուծել Պայմանագիրը:

7. Պայմանագրի ժամկետ և լուծում

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է անժամկետ:
7.2. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ, 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցելով ԷԿԵՆԳ-ին, լուծել Պայմանագիրը:

8. Այլ պայմաններ

8.1. ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի Ծառայության մատուցմանը ներգրավել երրորդ անձանց:
8.2. Պայմանագրի ներքո ծանուցումները պետք է հանձնվեն առձեռն կամ ուղարկվեն գրավոր նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
8.3. Պատվիրատուն իր պատասխանատու անձի տվյալները կարող է փոխել ԷԿԵՆԳ-ի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով:
8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցային ճանապարհով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.5. Պայմանագիրը կնքվում է երկու բնօրինակից՝ մեկական Կողմերից յուրաքանչյուրի համար:

ԷԿԵՆԳ

Տնօրեն

Արթուր Թունյան

Պատվիրատու՝

Աշխատակազմի ղեկավար

Խաչիկյան Խաչատուր

27.03.2017 թ. կնքված
Պաշտոնական էլեկտրոնային փոստին ծանուցումների հասցեագրման
ծառայություններ մատուցելու պայմանագիր N EC 062
Հավելված 1

Ծառայությունների գնացուցակ

Ուղարկվող հաղորդագրությունների քանակը	*Սակագինը, ներառյալ ԱԱՀ**
Օրացուցային ամսվա ընթացքում 1-ից մինչև 30,000 ընդհանուր քանակով հաղորդագրություններ ուղարկելու դեպքում յուրաքանչյուր ուղարկված հաղորդագրության համար	24 դրամ
Օրացուցային ամսվա ընթացքում 30,001-ից մինչև 50,000 ընդհանուր քանակի սահմաններում հաղորդագրություններ ուղարկելու դեպքում ուղարկված հաղորդագրությունների ընդհանուր թվից 30,000-ը գերազանցող, սակայն 50,000 ընդհանուր թիվը չգերազանցող յուրաքանչյուր ուղարկված հաղորդագրության համար	20 դրամ
Օրացուցային ամսվա ընթացքում 50,000-ից ավել ընդհանուր քանակով հաղորդագրություններ ուղարկելու դեպքում ուղարկված հաղորդագրությունների ընդհանուր թվից 50,000-ը գերազանցող յուրաքանչյուր ուղարկված հաղորդագրության համար	18 դրամ

* Բոլոր նշված սակագները ներառում են նաև պաշտոնական ծանուցման վերջնական ստացողի կողմից վերջինիս ցանկության պարագայում նախընտրած բջջային հեռախոսի համարին կարճ հաղորդագրության ուղարկելու ծախսը:

ԷԿԵՆԳ

Տնօրեն

Արթուր Թունյան

Պատվիրատու՝

Աշխատակազմի ղեկավար

Խաչիկյան Խաչատուր

Հավելված 2
«27» 03 2017թ. կնքված
EC 062 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

¦ ¦ 20

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«27» 03 2017թ. կնքված
ЕС 062 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն